ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
Ռ. Մարգսյան
«12» 09.2024թ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ուսումնադաստիարակչական խորհրդի գործունեության կանոնները:

1.2. Կանոնակարգի նպատակն է սահմանել այն հիմնական ուղղությունները, որոնք կնպաստեն կուրսղեկների աշխատանքային գործունեության հստակեցմանը, ուսանողական խորհրդի գործունեության արդյունավետությանը:

1.3. Սույն կանոնակարգը կազմելիս հիմք են հանդիսացել Քոլեջի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները և այլ իրավական ակտեր:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնադաստիարակչական խորհուրդը՝

- ապահովում է Քոլեջ-ուսանող համագործակցությունը,
- կազմակերպում է ուսանողների գեղագիտական, ֆիզիկական, հայրենասիրական, բարոյական, աշխատանքային դաստիարակությանն ուղղված բազմաբնույթ միջոցառումներ,
- համակարգում է ուսանողական խորհրդի աշխատանքները,
- հետևում է ուսանողների հաճախումներին և վարքին,
- աշխատանքներ է իրականացնում սոցիալապես անապահով ուսանողների, խնդրահարույց ուսանողների, անցանկալի վարք ունեցող ուսանողների հետ,
- ձեռնարկում է ուսանողների հասարակական ակտիվության բարձրացմանն ուղղված միջոցառումներ,
- սահմանում է դասախոսների և ուսանողների հերթապահություն,
- համագործակցում է կրթական համակարգի զարգացման գործում շահագրգիռ պետական և հասարակական կառույցների հետ,
- աջակցում է հասարակական կամ միջազգային կազմակերպությունների կողմից Քոլեջում անցկացվող միջոցառումների, դասընթացների և այլ աշխատանքների իրականացմանը:

3. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Ուսումնադաստիարակչական խորհրդի կազմում ընգրկվում են՝

- մանկավարժական աշխատողներ /դասախոսներ/,
- ուսանողներ՝ Ուսանողական խորհուրդ,
- ծնողներ,

- Ղեկավար և սպասարկող անձնակազմ (տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, կազմակերպիչ, գրադարանավար):

4. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ/ ԱՆԴԱՄՆԵՐԻ/ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քոլեջի տնօրենի հրամանով ուսումնադաստիարակչական խորհրդի անդամներից նշանակվում է խորհրդի նախագահ /տնօրեն, տեղակալ, կազմակերպիչ կամ այլ աշխատակից/, որը համակարգում է խորհրդի աշխատանքները՝ հետևյալ գործառույթներն իրականացնելիս.

- խորհրդի տարեկան աշխատանքային պլանի համատեղ մշակում և ներկայացում հաստատման,
- կատարված աշխատանքների վերահսկողություն՝ վերլուծություն, քննարկում, գնահատում,
- սեմինար- խորհրդակցությունների անցկացում,
- Քոլեջի, նրա ստորաբաժանումների ղեկավարներին և դասախոսներին ուսումնա-դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում աջակցության ցուցաբերում,
- դասալսումներ՝ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով,
- աջակցություն սոցիալապես անապահով ուսանողներին,
- սոցիալապես անապահով ուսանողների բացահայտում և հաշվառում,
- անցանկալի վարք ցուցաբերող ուսանողների հաշվառում,
- անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում,
- հակաիրավական և հանցագործ վարք ցուցաբերող ուսանողների հետ աշխատանք:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնակարգը գործում է սահմանված կարգով տնօրինական խորհրդի կողմից հաստատման և տնօրենի կողմից վավերացումից հետո: